նորա բազմութիւնք Իսլամաց, և կոտորեալ զնոսա դարձոյց յետս, եւ մտեալ 'ի քաղաքն կոտորեաց զընդդիմակացս իւր։ Եւ զկնի հնգից աւուրց խօսեցաւ հաշտութիւն ընդ Սուլթանին, և եդին դաշինս, և էառ թագաւորն 'ի նմանէ պատանդս զարս 20 'ի մեծամեծաց տէրութեան նորին։ Սուլթանն հաւանեցոյց զթագաւորն ուղղել զճանապարհ իւր 'ի Տարսոն և 'ի Մամեստիա, եւ նա արար ըստ խրատու նորին։ Եւ նախ քան զժամանել նորին յերկիրս այս, ըստ խնդրանաց նորին առաքեցաք թուղթս և զարս ոմանս երեւելիս ընդունել զթագաւորն և զպատասխանի թղթոյն, և եթէ հնար իցէ դարձուցանել զայն վերստին յերկիր Գրլիճ Արսլանայ։ Ցանդիման եղեն թագաւորին եւ մեծամեծաց նորին, մատուցին ըզթուղթն և ծանուցին զհանդամանս վերադառնալոյ։ Խրատեցաւ առ նովաւ բազմութիւն զօրաց եւ ինքն էջ յեզր գետոյն, և յետ կերակրոյ՝ ննջեաց, և զարթուցեալ ցանկացաւ լուանալ 'ի գետն. և իբրեւ էլ 'ի ցուրտ ջրոյ անտի, անկաւ խօթ 'ի մահիճս, որ և մեռաւ իսկ։ Եւ Լեւոն երթայր ընդունիլ զթագաւորն. և 'ի պատահիլ դիպուածոյս, խոյս ետուն անտի պատգամաւորքն, եւ եկեալ պատմեցին Լեւոնի, եւ նա ամրացաւ 'ի բերդի ուրեք։ Իսկ որդի թագաւորին, նախ քան զարշաւանս կացեալ էր ժառանգ թագաւորութեան հօր իւրոյ, որ և կատարեցին ըստ սովորութեան իւրեանց։ Եւ յետս դարձուցեալ զպատգամաւորս Լեւոնի կացոյց առաջի իւր, և ասէ. Հայր իմ 'ի ծերութեան իւրում ոչ վասն այլ իրաց եկն յաշխարհս այս, այլ միայն կատարել զուխտն իւր յԵրուսաղէմ քաղաքի, և ես ժառանգ նորին՝ կրեցի վիշտս 'ի ճանապարհի. եթէ ոք հնազանդեսցի ինձ՝ ոչ արշաւեմ յերկիր նորա. գնաց Լեւոն ետես զորդի թագաւորին և զայլսն, և ետես զբազմութիւնս զօրաց նորին, որք էին 42 գունդ հեծելոց վառեալ կուռ զրահիւք. թող զհետեւակս եւ զխառնիճաղանջս, որոց ոչ գոյր թիւ։ Կարի խիստ էին օրէնք նոցին 'ի վերայ յանցաւորաց, մինչեւ զենուլ զնա իբրեւ զայծեամն. լու եղեւ թէ՝ ոմն 'ի մեծամեծաց իւրեանց գան եհար ուժգին զծառայ իւր, 'ի ժողովի կղերաց ետուն վճիռ զենուլ զնա. թէպէտ և բազումք աղա-